

նմանող աւան մը աչքի առջեւ բերել, անոնցմէ կազմելու համար սա երիտասարդին անդրանիկ տասնամեակը, որոշ բարեկեցութեամբ (յիշեց, թէ հայրը այգի ունէր ու իրենց գինին՝ անուն) ու գորովիլ դերէն, ճակատագրէն, զորս իր մայրը այնքան սրտառուչ երազանքով թել-թել, տախտակ-տախտակ յօրիներ էր իր բալիկին հասուկ տարիքին համար, թերեւս ընտրած ալ դրկից կամ մօտի ուրիշ աւանէ մը քաղցրաչուի աղջնակ մըն ալ, որ պիտի անցնէր հայրենի օճախին, գրաւելու իր տեղն ու յաւեր-ժելու արիւնին կերպարանքները:

Կովկասը, այս դարու սկիզբը, իմ մատղաշ զգայնութեանս համար անտարազելի, համապարփակ խորհուրդ մը, հոգեբանութիւն մըն էր: Մաթիկ Մելիքխանեանցի պատմումը ինծի բերաւ բարիքը այդ Կովկասը աւելի յստակ տեսնելու ինձմէ ներս: Պարզուեցան ինծի համար բաներ, որոնց հանդիպեր էի իրենց գրականութեան մէջ, բայց չէի հասկցեր: Անոնց արտայայտութեան անկանգնելի աղքատութիւնը, մերինին տարադէպ խնամքին ու բռնադքօսութեան դէմ դատեր էի մերինին չափ դրական, այսինքն՝ արուեստական: Անոնց ժողովրդական աւիշը, մա՛նաւանդ երգերու մէջէն, գտած էր սիրտս, բայց տառապանք առթած ուղեղիս: Մաթիկ Մելիքխանեանց բարիքը ըրաւ մա՛նաւանդ ինծի մօտեցնելու, սիրելի ընծայելու արեւելահայ վէպին արժանաւատ բարեխառնութիւնը, հակառակ անոր, որ հոն գործող տիպարները կնիքին տակն են ծանր կաղապար դարձող իրապաշտութեան մը: Ոչ Մամուրեանի յիմար հերոսները («Անգլիական ու հայկական նամականի»ներուն վիպային մասերը, ու ինքը՝ «Ան լերին մարդը» ամբողջութեամբ), ոչ ալ Տիւսաբի նոյնքան կեղծ հերոսները («Մայտա», «Արաբսիա», «Սիրառոյշ») անկարող էին դիմանալ արեւելահայ վէպին ամէնէն խոնարհ մարդոց իրաւութեան առջեւ: Աւելին. այդ մարդերը, այսինքն՝ Րաֆֆիի, Շիրվանզադէի, Մուրացանի, նոյնիսկ Պոօշեանի հերոսները չէին «գլխից վիրաւոր»: Իրենց անբաւականութիւնը, անխնամու-